ՄԱՄԼՈ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

08 Դեկտեմբերի, 2014թ. ք. Երևան

Միջազգային հակակոռուպցիոն օրվան նվիրված ամենամյա մրցանակաբաշխության

2014 թվականի դեկտեմբերի 9-ին Երևանում (վայրը՝ «Ռոյալ Թուլիփ Գրանդ Հոթել Երեւան», Զմեռային այգի) «Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիա» հասարակական կազմակերպությունը Եվրոպական միության ֆինանսավորմամբ իրականացվող «Կոռուպցիայի դեմ պայքարի բազմակողմանի խթանում» ծրագրի շրջանակներում ՔՀԿ Հակակոռուպցիոն Կոալիցիայի հետ համատեղ կազմակերպում է ամենամյա մրցանակաբաշխություն՝ նվիրված միջազգային հակակոռուպցիոն օրվան:

Միջոցառմանը հրավիրված են ներկայացուցիչներ միջազգային և պետական կառույցներից, Երևանի և ՀՀ մարզերի քաղաքացիական հասարակությունից, ԶԼՄ-ներից:

Միջոցառմանը ողջույնի խոսքով հանդես են գալու ՀՀ Արդարադատության փոխնախարար Սուրեն Քրմոյանը, Հայաստանում Եվրոպական Միության պատվիրակության համագործակցության բաժնի ղեկավարի տեղակալ Խոսե Մարիա Մեդինա Նավարոն, «Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիա» ՀԿ նախագահ, «Կոռուպցիայի դեմ պայքարի բազմակողմանի խթանում» ծրագրի ղեկավար Կարեն Զաղոյանը:

Ողջույնի խոսքերին հաջորդելու է միջազգային հակակոռուպցիոն օրվան նվիրված ամենամյա մրցանակաբաշխությունը, որի շրջանակներում մրցանակներ են հանձնվելու Տարվա քաղաքացուն, ՔՀԿ-ի և ԶԼՄ-ի ներկայացուցիչներին:

Ծրագրի հիմնական նպատակն է մեծացնել քաղաքացիական հասարակության կազմակերպությունների (ՔՀԿ) դերը հակակոռուպցիոն բարեփոխումների խթանման և իրականացման գործում: Ծրագրի շրջանակներում կիզորացվեն ՔՀԿ-ների և ԶԼՄ-ների մոնիթորինգի և վերահսկողության կարողությունները: Կկազմակերպվեն հակակոռուպցիոն դասընթացներ ՀՀ մարզերում ՔՀԿ-ների և ԶԼՄ-ների համար՝ կոռուպցիոն բնույթի և տեղեկատվության ազատության խնդիրներն առավել լավ ըմբռնելու համար: Այս միջոցառումների նպատակը հակակոռուպցիոն գործողությունների իրականացման առկա հնարավորությունների խորացումն է: Հանրային վերահսկողության արդյունավետության բարձրացման և համապատասխան մոնիթորինգային, վերահսկողական և հետաքննական ծրագրերի իրականացման նպատակով կտրամադրվեն փոքր դրամաշնորհներ: Հակակոռուպցիոն ինստիտուցիոնալ մեխանիզմների ամրապնդման համար ՔՀԿ-ների մասնակցությամբ կմշակվի ՔՀԿ-կառավարություն կայուն երկխոսություն:

Ծրագիրն իրականացվում է Եվրոպական միության ֆինանսական օժանդակությամբ՝ «Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիա» ՀԿ-ի կողմից (իրականացնող)՝ «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ի հետ համագործակցությամբ (գործընկեր): Ծրագրի տևողությունը 3 տարի է (2014 թվականի հունվարից 2016 թվականի դեկտեմբեր): Ծրագրի բյուջեն կազմում է 650.000 եվրո:

Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիան (ՀԵԻԱ) ստեղծվել է 1995թ.-ին: ՀԵԻԱ-ի առաքելությունն է նպաստել Հայաստանում իրավունքի գերակայության, ժողովրդավարության և քաղաքացիական հասարակության կայացմանը, որտեղ բնակչությունը իրազեկ է, իսկ նրա իրավունքները՝ պաշտպանված:

Ինֆորմացիայի ազատության կենտրոնը (ԻԱԿ) գործում է ավելի քան 10 տարի: ԻԱԿ-ի առաքելությունն է նպաստել տեղեկատվության ազատության մասին օրենսդրության կիրառմանը, ՀՀ կառավարման համակարգի թափանցիկությանն ու հրապարակայնությանը և այդ համակարգում քաղաքացիական հասարակության մասնակցության ապահովմանը:

Լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք դիմել. Ծրագրի հանրային կապերի համակարգող Նարինե Կարապետյանին, աշխատանքային օրերին, ժամը 9.00-18.00; հեռ. 540199; ֆաքս 580299; URL http://www.ayla.am: Գատարող՝ Նարինե Կարապետյան,Էլ.փոստ՝ pr@ayla.am

Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիա
Հասցե Նալբանդյան 7, բն. 2 Երևան, Հայաստան, 0010

Հեռախոս: +37410 54 01 99
Հեռապատճե: +37410 58 02 99

Ինֆորմացիայի ազատության կենտրոն
Հասցե Բուզանդի 1/3
Երևան, Հայաստան, 0010

Հեռախոս: +37410 56 03 60
Հեռատճե: +37410 56 03 60

Ծրագիրը ֆինանսավորվորվում է Եվրոպական միության կողմից

Հայաստանում Եվրոպական միության պատվիրակություն
Հեռախոս +37410 54 64 94
Հեռապատճե +37410 54 64 95

Եվրահանձնաժողովը ԵՄ գործադիր մարմինն է:

Եվրամիությունն ունի 28 անդամ երկիր, որոնք որոշել են աստիճանաբար կապակցել իրենց նոու-հաուն, ռեսուրսներն ու ուղիները: 50 տարվա ընդարձակման ժամանակահատվածում նրանք միասին ստեղծել են կայունության, ժողովրդավարության ու կայուն զարգացման տարածք՝ պահպանելով մշակութային զանազանությունը, հանդուրժողականությունը և յուրաքանչյուրի անկախությունը: Եվրամիությունը հանձնառու է կիսել իր ձեռքբերումներն ու արժեքները իր սահմաններից այն կողմ գտնվող երկրների ու ժողովուրդների հետ: